

էջ 59): Ըստ Գաւրիժեցւոյն, Գրիգոր պարք. ճամբորդած է նաև Լեհաստան, և Կամենիցի մէջ արեղայի մը քառասունիս պատարագի խնդրոյն համար կը գծաուելի Նիկող կպս. ի հետ, որուն մատնութեան հետեանքով՝ դուրս կը հանուելի Լեհաստանէն: Գրիգոր Կեսարացի կը բանադրէ Նիկողը եւ կը թելադրէ որ նոյն բանադրանքը կատարէ նաև Մովսէս Սիւնեցի կի՞ղ. եւայլն. (Գաւրիժեցի, էջ 366 եւ հետեւեալք): Գաւրիժեցին եւ ժամանակակիցք մեծ ներբողներով կը գովեն Գրիգոր Կեսարացին, իբր կարող եւ զիտնական եւ պատկառելի եկեղեցական, «բանիբուն եւ սիրող իմաստասիրական հանճարոյ (անդ. էջ 442), նսեւ այր երևելի, վարուքն պարկեշտ եւ չորակեաց. իմաստութեամբն փարթամ, բանիբուն եւ յոյժ հանճարեղ, այնպէս որ ոնուանի էր ի մէջ աշխարհի եւ ամենայն աշխարհ կոխեալ գնմանէ» (անդ. էջ 288): Իսկ Գրիգոր վրդ. Գարանաղցին խիտ աննպատակ կը խօսի անոր վրայ. կ'անուանէ զանիկա խոսարարանոց եւ զոռոզ. և թէ այս Գրիգորս որքան անցք անցոյց ընդ մեզ ի տարապարտուց եւ մեք ընդ նմա. (Գաւրիժեցի, էջ 367). «մինչ որ այս Կեսարացի Գրիգոր թիւնուոր վիշապս եւ փռուամորս ինքնին երեկ. բունութեամբ անկաւ ի վերայ եւ յինքն գրաւեաց զպատրիարքութիւնն. եւայլն.» (անդ. էջ 397), կը պարսաւէ «կոմրուելի սուրբ Նիկողայոս եկեղեցիի վերաշինութեան» գործին նկատմամբ Կեսարացիին բռնած ընթացքն, և այլ վարմունքը (անդ. էջ 185):

Ղալաթիոյ Ազգ. Մատենադարանին ձեռագրերնէն միւոյն յիշատակարանին մէջ Յակոբ երէց գրած է իր հօրեղբոր Գրիգոր Կեսարացիին մասը եւ Շահին Չէլէպիի ձեռքով կատարուած անոր դամբարանին ծախքը եւ այդ ծախուց համար իր հօրեղբոր մատենադարանին ծախուելը եւայլն. նոյն յիշատակարանին կարևոր մասերն հոս կը գնենք. «... վախճանեցաւ բարունապետս մեր ի սեպհական վիճակ իւր ի Ստամպոլ. և ես ունին սովորութիւն այլազգիք. որ ոչ թողուն թաղել զմեռեալս ի շինամէջս քաղաքին. այլ անշէն տեղիս եւ հեռի ի քաղաքէ. զոր Շահին Չէլէպին արքունական հրամանաւ թաղեաց ի Ղալաթիս ի սուրբ Լուսաւորիչ եկեղեցին. եւ սակս թաղելոյ նմա զնշխորան եւ թէ այլ ինչ խորճ զոր արարեալ էր և էաւ ի մէնջ Գոնէն (= 3047) ղոչ. եւ միանգամայն եղև խորճ Դոնէն (= 4700) ղոչ. եւ այս եղև պատճառ վաճառելոյ գրեանց և այգոյն. զոր բազում վիշտս